

Սմբատ Բիւրաս

Նմբագրութիւն «Փիիհնիկ» Ի Ալեքսանդրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՀՍԱՆ

Չր. 45
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

Յր. 15
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆԻԿ Է

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲՈՎ. 6

ՓԻԻԿՆԻԿ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՉՈՐԵԲՇԱԲԹԻ 28 ՄԱՅԻՍ 1902

ԹԻԻ 52

ԿԻՐԱԿԻ ՕՐՈՒԱՆ

ԽԵՂԿԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

Ինքնընտիր Խնամակալութիւնն որ առաջին օրէն լուրջ հանգամանքէ զուրկ էր արդէն, հիմակ բողոքովին զաւելչտական գործունէութեան շրջանի մը մէջ մտած է: Եթէ ասով ազգային գործերը, եկեղեցին ու գարոցը մեծ օգուտ մը չեն տեսնար, գոնէ ի փոխարէն ժողովուրդը կը զբօսնու: Ալեքսանդրիայի պէս քաղքի մը մէջ ուր հասարակ ժողովուրդը կիրակին աժանկեկ ինչպէս անցունելուն մասին շփոթած է, ձրի ներկայացումներ սարքել ժամանցի համար այնքան փափկանկատ հոգածութիւն մըն է որ կըրնայ մասամբ չքմեղացնել նոյնիսկ ապօրէն Խնամակալութիւն մը:

Թող ներուի սակայն մեզի դիտել տալ թէ այս կիրակի օրուան ազգային մէյճան օյիկին ազատ չէր կարգ մը թերութիւններէ որոնք շատ վրտանգեցին ներկայացման յաջողու-

թիւնը: Այս դիտողութիւնն ընելով մեր նպատակն է խթան մը տալ Տ. Լեւոն Նիզամեանի, որ կ'երեւայ թէ այդ զաւելչտախառն կատակերգութեանց կազմակերպիչի պաշտօնին կողուած է, որպէս զի յառաջիկայ ներկայացումներուն քիչ մը աւելի խնամք տարուի: Ու ասիկա պարզապէս մեր Խնամակալներուն փառքն ու պատիւը մեծ պահելու լկեցուցիչ մտատանջութեամբն է որ կ'ընենք:

Ինչ որ մասնաւորապէս ժողովուրդը պատրանքի մատնեց, եղած ռեֆրամներուն անհամաձայնութիւնն էր՝ տրուած ներկայացման հետ:

Շարաթ մը ամբողջ կապարիէն Մուհարրէմ պէյ, Բարմուզէն Սարաֆիէ, բոլոր սրճարանները, պառերը, զբօսավայրները մունետիկ կանչել տալ — Կիրակի օրը ժամ եկէ՛ք տեսէ՛ք ինչ խըյախ բաներ պիտի ըլլան՝ ըսել ու յետոյ իբրև ժամանց, իբրև միակ հրապօյր, միակ attraction, ցոյց տալ Տ. Լ. Նիզամեանի, Խամսը Յուսեփի, Մեռոնսը Աւետիսի, խուշճի Աբրահամի ու Տելի Մըկըրի լուսնոտի ցատ-

կատուքները, պարզապէս ժողովրդին քթին խնդալ է: Ասանկ խաղ ներելի չէ նոյնիակ Ապրիլ մէկին: Ու կը կրրկնենք նորէն, այս դիտողութիւնը կը նենք միայն ինքնակոչ խնամակալութեան prestige ը ի նկատ ունենալով: Եթէ երկրորդ ներկայացումն ալ ասոր նմանի, խնամակալութեան պատիւը փարայի մը պիտի ըլլայ ու պատմութեան առջև ասոր ահռելի պատասխանատուութիւնը պիտի ծանրանայ Տ. Խամարզ Յուսէփի, Լ. Նիզամեանի ու Մեռնսըզ Աւետիսի գլխին:

Կիրակի օր ժամը առտուան տասն էր երբ Եկեղեցիին պարտէզը մտանք: Հետաքրքիր հանդիսականներ, մեծ մասամբ տղաք, բոլորուած էին ալմախիտի մը շուրջը, որուն տակ հաւաքուած էր հոպիտներու խումբը:

Խոչհրդարանին պատուհանները որոնք օթեակներու վերածուած էին այս առթիւ, լեցուած էր: Պէյերու սօշնա մը ամբողջովին գրաւած էր օթեակ մը. Աբրահամ պէյ, Բարթոլ, Միգայել պէյ, Բէիլեան, Հաճի Միհրանիկ պէյ, Գալֆայեան, ևն: Պարտէզին մէջ լրտեսներու և ոստիկաններու շոկատ մը կը հսկէր հանրային բարեկարգութեան:

— Ներկայացումը սկսած է, հարցուցինք հանդիսականներէն մէկուն:

— Չեմ գիտեր, պատասխանեց:

Կրկնեցինք մեր հարցումը ուրիշի մը և նոյն պատասխանը ստացանք:

Երրորդ մը որ կէս պաշտօնական անձնաւորութիւն մըն էր և քիչ շատ տեղեակ աստուածներու գաղտնիքին, խորհրդաւոր ձեռք մը փսփսաց մեր ականջին.

— Վերէն հրահանգի կը սպասեն կոր...:

Յայտնի կ'երևար որ գործը չէր

քալեր, վերէն վար, վարէն վեր մարդիկ կուգային կ'երթային, Խամարզ Յուսէփ, Մեռնսըզ Աւետիս, Կէմիճի Արութին, Տիքիճի Մերոն շարժու ձեւերով բաներ մը հասկցնել կ'ուզէին խնամակալներու օթեակին... բայց ներկայացումը չէր սկսէր:

Մեր հայկական ներկայացումներու բախտը եղած է այս միշտ: Մնակեան, Ճասուլեան, Թրեանց ևն. ասոր տխուր փորձառութիւնը ունեցած են, աւա՞ղ: Վերջին վայրկեանին կա'մ թատրոնին կա'մ կազին վարձքը չէ տրուած, կա'մ գերասաններու դրամը չէ վճարուած ու ահա՛ հանդիսականները կը տուժեն այս ամէնքը:

Կազմակերպիչները պէտք է դիտանան որ այս տեսակ պարագաներուն պէտք չէ մանաւանդ վիրաւորել դերակատարներու արժանապատուութիւնը. պէտք չէ, օրինակի համար, մէկուն 30 և ուրիշի մը 50 զրուշ տալ: Իսկ պարզապէս յիմարութիւն է կարծել թէ պարզ խոստումով մը կարելի է քալեցնել այդ մարդիկը: Այս ընդմիջեալ դիտողութեան վրայ Հայ Եկեղեցւորիներու խորին ուշադրութիւնը հրաւիրելէ ետքը դառնանք... արմաւենիի ծառին քով որ ա'լ այնքան պատմական եղաւ որքան փաշային Շալը:

Հանդիսականները ձանձրոյթի նշաններ ցոյց տալ սկսած էին երբ ճառագայթում մը երեցաւ Տ. Լևոն Նիզամեանի մինչև այդ բոլէն մուայլ դէմքին վրայ: Օթեակները, որոնք գրեթէ պարսլուած էին, լեցուեցան ու շշուկ մը տաշածուեցաւ հոսարակութեան մէջ.

— Կը սկսի կոչ, կը սկսի կոր...:

Արևաւենիին տակէն խուլ հոնդիւն մը լսուեցաւ, հեռաւոր ծափահարութեան ձայնի պէս բան մը, որուն կ'ընկերանար պրկուած, կաշկանդուած, խեղդուկ հծծիւններ:

— Ի՞նչ կայ, ի՞նչ եղաւ, մարդ մա-

րեցաւ, հարցուցինք մեր քովը կեցող
այն պարսնին որ կէս պաշտօնական
հանգամանք ունէր:

— Չէ, պատասխանեց յուզեալ շեշ-
տով մը, սկսանք...

— Կաղաչենք թարգմանեցէք մեզի
այդ շնկոցին նշանակութիւնը, պա-
ղատեցանք իրեն:

— Կեցցէ՛ խնամակալութիւն կ'ըսեն
ու կը ծափահարեն կոչ, բացատրեց
մեզի:

— Աւելի՛ բարձր, աւելի բարձր...
ձայները բարձրացան.

— Գիցէ՛ գրամալութիւն...

— Կցցէ՛ խորհակալութիւն...

— Քիցօ՛ կրամակալութիւն...

Այս խաղքութեան միջոցին յան-
կարծ Տ. Լ. Նիզամեանի գլխարկը որ
մինչև այդ վայրկեանը ոչ և է ան-
հանգարտութեան նշան ցոյց չէր տու-
ած, խելահեղ ստուումով մը ձգեց իր
նստոտեղին ու սկսաւ բարձրանալ օդին
մէջ. Բարեբախտաբար Տ. Լ. Նիզամեան
փախստականին օձիքէն բռնած էր, եթէ
ոչ պիտի երթար զարնէր խնամակալ հաճի
Պէյին քիթին որ ճիշդ այդ միջոցին
խորհրդարանի պատուհանէն դուրս եր-
կընցուցած էր իր մարմնոյն վերնա-
կողմը:

Տ. Լ. Նիզամեանի գլխարկէն քա-
լալերուած՝ Կէմիճի Արութիւնին, Լօ-
թարեանի Լեռնին, Տէօքմէճի Գէորգին,
Իզմիրլի Գօնթ Սէրգիսին, Խամսըզ Յու-
սէփին, Եալուրչը սարը Երուանդին,
Թէքիրտալը Կարպիսին, Տիքիճի Մե-
րոնին, Մեռոնսըզ Աւետիսին, Տելի
Մկրին, Խուչճի Աբրահամին ու Թէնէ-
քէճի Խորէնին ֆէսերն ու գլխարկներն
ալ օդին մէջ բարձրացան ու այլան-
գակ, խօլ ու դիւային պար մը կազ-
մելով եկան հանգչիլ ամէն մէկը, ի-
րենց յատուկ գլուխներուն վրայ:

Տ. Լ. Նիզամեան յուզման ու յա-
փրջտակութեան գերազրգուծեան մը
հասած, նոյն միջոցին, շղաճգային ցըն-

ցումով մը ոտքերն ու ձեռքերը շար-
ժելով կը փրփրար:

— Ոճրագոյճնե՛ր, խռովարար-
նե՛ր, Պանքան կը կոխեն կո՛ր, կե-
ցէ՛ք, կեցէ՛ք կրակ կա՛յ, եանկըն
վա՛ր, շն՛ւր, հասէ՛ք, մկրա՛տս, մըկ-
րա՛տս, մկրա՛տս...

Կարելի է ըսել որ ներկայացման
միակ թօհա՛ւ մասն էր այս:

Խնամակալները աշուրնին հպար-
տութեան յուզումովը լեցուած ար-
ցունքներով, երախտագէտ նայուածք-
ներ կ'արձակէին Խամսըզ Յուսէփին,
Տէլի Մկրին ու Մեռոնսըզ Աւետիսին
որոնք այնքան անձնուիրաբար իրենց
պաշտպանութեան տակ առած էին
ինքնահրաւէր ու խախուա խնամակա-
լութիւնը:

Առանց ներկայացման վերջառ-
ութեան սպասելու դուրս ելանք:

Այսքան խաղք ու խայտառակ
բան մը երևակայել անկարելի էր:

..

Ամփոփելով մեր կարծիքը Կիրակի
օրուան խեղկատակութեան մասին, սա
եզրակացութեան կը յանդինք որ թէ՛
կազմակերպիչները և թէ՛ դերակա-
տարները անյաշող եզան ու զաւեշտը
բացարձակապէս վիժեցաւ:

Խնամակալներն իսկ իրենց վայր-
կենական խանդավառութենէն սթա-
փելէ ետքը կ'երևայ որ զգացած են
այն անհուն ծաղրը որուն առարկայ
եզան ժամի մը չափ. ու կը հաւատեն
որ Միքայէլ պէյ Բէհլեան իր դժգո-
հութիւնը նոյն իսկ բաւական բուռն
կերպով յայտնե՛ր է արդէն կազմա-
կերպիչներուն: Ասիկա պատիւ կը բերէ
իրեն:

Դժգոհ նաև միւսներն ալ. Եւ ի-
բաւունք ունին:

Ի՞նչ կ'ուզէք որ հասկնայ խեղճ
Գրիգոր Մելքոնեան մը «Կեցցէ խնա-
մակալութիւն» ազագակէն. իրեն շատ

աւելի հաճոյ ու հասկնալի պիտի ըլ-
լար գուցէ եթէ անցած միջոցին «Ծա-
շա՛ Դալսէրի բաստրումսը» պոռային:

Նոյնպէս աւելի կենցաղագիտու-
թիւն ցոյց տրուած պիտի ըլլար եթէ
Հաճի Միհրան պէյ Գալֆաեանը փա-
ռաբանէին «բէ՛հ, բէ՛հ, Հաճի բէկ»
պարսկական կեցցէներով:

Տիար Զարեհ Սըվազլըի համար
vive Sivaxli! Լպւագոյն չէ՞ր միթէ:

Իսկ Բարթող պէյի համար արա-
բերէն բան մը գտնալ պոռալու էր
երեսին:

Ձանացէ՛ք յարմարիլ անոնց ճա-
շակին որոնց հաճոյ ըլլալ կ'ուզէք:

Ահա՛ այն դիտողութիւնները զորս
պարտք կը զգանք ընել յուսալով որ
նկատողութեան պիտի առնուին ապա-
գայինք:

Ու հիմակ կ'սպասենք charivariի
երկրորդ ներկայացման մը:

Վ. Ա. Հ. Ր. Ա. Մ.

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐ

Ազգ մը՝ դրողներէ եւ խօսողներէ կը
զարթնի եւ կուզողուի, գործողներով կը
չինուի եւ խորհողներով կը փրկուի:

Գ. ԵՊՍ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՅ

Ընտրելագոյն է բարի համբաւով մեռ-
նիլ քան ապրիլ նախատինքով:

ՍՈԿՐԱՏ

Գիտութեան ազնուագոյն մրցանակը՝
տգիտութիւնը լուսաւորելու հաճոյքն է:

Պ. ՏԸ ՍԷՆ-ԲԻԷՌ

Չարերու զգուանքները միշտ մատ-
նութիւն կը ծածկեն:

ՓԵՂՐՈՍ

Ոչինչ այնքան բուռն է՝ որքան նոր
աղանդաւորի մը եռանդը: (1)

(Գ. Ս.) ՕՏԵԱՆ

(1) Երեւանի Օտեան ողջ ըլլաւ, նոր
աղանդաւորիկն տեղ նոր Խնամակալ մը պիտի
ղնէր:

Մ. Յ.

Մեր տգիտութիւնը արգահատանք պի-
տի ազդէր մեզ, եթէ մեր սնափառութիւնը
անոր ծանօթութիւնը չի ծածկէր մենէ:

ՅՕՆԹԸՆԷԼ

Առողջ խելքը կը կորսնցնէր իր նշա-
նակութիւնը, եթէ ամբողջ չի կարծէր որ
ինքն ալ առողջ խելքի տէր է:

ԷՄ. ՎԵՐԹԷՅՄԸՐ

Վատերը կ'ատեն եւ կը բամբասեն
սրտի տէր մարդերը. անոնք նման են խո-
հանոցի շներուն սրոնք, երբ որսկան
չուն մը կը տեսնեն, խկոյն կը հաջեն
անոր դէմ, բայց չեն համարձակիր դուրս
ելլել անոր հետ կռուելու համար:

Ազահ կրօնաւորը տեսակ մը գող է:

ՍԱԱՏԻ

Օրէնքին հակառակելը՝ ոչ հնարաւոր է
եւ ոչ պէտք (2) օրէնքը ամէն ազգի եւ աշ-
խարհի մէջ անողոք է: ՊԵՐՃ՝ ՊՈՕՇԵԱՆՅ

Իր անձին ամօթը կեանքին ամենա-
մեծ տանջանքն է:

ՏԻԿԻՆ ՏԻԲԻՆԷ

Չը կայ խաղաղութիւն չարասէր յի-
մարներու հետ. եթէ պահ մը խոնարհ երե-
ւիս, կը կարծեն թէ առ անի այդպէս կը
չարժիս:

Պատուաւոր մարդը երթակայ չէ ստոր-
նանալու. առիւծը անօթութենէ կը մեռնի
բայց հոտած միս չուտեր:

Հաւաքեց

Ա. Չ.

ՏԷԼԷՅՕՆԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

— Մտայ եմ Ձեր վսեմութեան, Պէ՛յ.

— Նստեցէ՛ք

— Մտանիդ խոնարհաբար իր կրկ-
նակ շնորհաւորութիւնները կը մատուցանէ
վասն Շահապարգեւ պէյութեան եւ աժան-
ընտիր, թաղականութեան կրկնակի յաղ-
թանակին:

— Ձեր վսեմութիւնը թող ընդունի
իր խոնարհ ծառային խառնիխուռն զգա-
ցունները:

(2) Բայց հոս րե՛ պե՛ս ք եւ րե՛ հնա-
րաւոր. (° ° °)

Մ. Յ.

— Գոհ եմ ձեզնէ, դուք ներկա՞յ էիք քուէհամարին, ինչպէս անցաւ :

— Ձեր Վսեմութիւնը արդէն համոզուած պէտք էր ըլլալ թէ՛ իր Վսեմութեան անունը երաշխաւորութիւն մըն էր անպայման յաջողութեան :

— Այո՛, շատ ուրախ եմ որ ի դուր չ'անցան մեր ջանքերը, շնորհակալ եմ ձեզնէ ալ, որ ոչ սակաւ աշխատեցաք ազգին գործերը վստահելի ձեռքերու մէջ դրնելու համար :

— Անշուշտ Վսեմ. Պէյ. ի չպէս ժողովուրդը, նոյնպէս խոնարհ ծառանիդ, անհուն վստահութիւնը ունէինք թէ՛ Ձեր Վսեմութիւնը պիտի պսակէ մեր յոյսերը, իր խոստումներով զորս միշտ կրկնած է.

«Մինակ ե՛ս կը բաւեմ» :

— Այդ սկզբունքս է արդէն որուն ուխտած եմ հաւատարիմ մնալ մինչեւ...

— Մենք արդէն . . .

— Դուք գիտէք թէ այս պայքարը սկսած օրէն անունիս շուրջը ինչեր դարձան, բայց հիմայ փորձով կը տեսնէք թէ՛ ես խօսքս քայեցնող մա՛րդ եմ, ինծի Գալֆաեան կըսեն :

— Մանաւանդ Վսեմ. Պէյ, Պարսից Շահնշահի բարձր գնահատման արժանանալու երջանիկ օրէն ի վեր, որ հպարտութեամբ լեցուց մեր սրտերը :

— Այո՛. այո՛, այդ արդէն այդպէս պէտք էր ըլլալ, եւ ահա սեղանիս վրայ դիզուած սա շնորհաւորական նամակները, ապացոյց են որ ես կրցել եմ ամենէն մեծ ժողովրդականութիւնը շահիլ : Կը յիշէք անշուշտ «Փիւնիկ»ի մէջ իմ «սրիկայութեան ծայրայեղութիւնը». ձեր մէջէն ոչ ոք պիտի համարձակէր այս կերպով պաշտպանել սկզբունք մը որ համաձայն ըլլար ձի՛շդ Ազգային Սահմանադրութեան անձեռնմխելի սկզբունքներուն, եւ մանաւանդ այն խրոխտ լեզուն զոր ես գործածած եմ, ցոյց տուի ատով թէ՛ միակ մարդն եմ որ մինչեւ վերջը պիտի կոռւիմ կամայական ձգտումներու դէմ որոնք կ'սպառնան ազգային շահերուն :

— Ձեր Վսեմութիւնը բոլորովին թող ապահով ըլլայ այդ մասին թէ՛ Սահմանադրութեան թշնամիները անդիմադրելի ժայռի մը պիտի բաղխին յանձին Ձերդ Վսեմութեան որուն կապաւինինք :

— Ես արդէն միշտ ըսել եմ Ձեզ թէ՛ Գալֆաեան փառթին անընկճելի պիտի մը-

նայ. թող հասկնան հիմայ բոլոր այն հակասակորդները որոնք ամէն հնարաւոր միջոց գործածեցին՝ զիս, միա՛կ զիս ձեռք բերելու համար, գիտէին թէ ի՛նչ նկարագրի տէր մարդ եմ ե՛ս :

Ի՛նչ որ է, ալ ամէն բան վերջացաւ ու ես ցոյց տուի իմ ու՛ր ըլլալս, սակայն խօսքը մէջէնս իս, քուէհամարի օրը տագնապալի օրերէս մէկը եղաւ. չէք կրնար երեւակայել թէ՛ ինչ անձկութեան վայրկեաններ ունեցայ, ինչպէս գիտէք արդէն, հաղորդակցութեան մէջ էինք, եկեղեցիէն պիւռօն, պիւռօն տունը. սիրտ հատնումի օր մը պարզապէս. (սիկառ մ'ալ վառեցէք), այս ամէնով հանդերձ հարիւրին երկու հարիւր ապահով էի թէ՛ մեծագոյն քուէն պիտի շահիմ, վասն զի ե՛ս միայն գիտեմ իմ ըրած նիւթական ու բարոյական զոհողութիւններս, բայց պէտք է խոստովանիլ, չէի կրնար համբերել, կուզէի վայրկեանէ վայրկեան իմանալ քուէհամարի արդիւնքը. առաջին լուրը որ հասաւ՝ շատ նպաստաւոր ընթացք մ'ունէր, 100 ին 60 շահած էինք, երկրորդ ձայնին՝ յաջողութիւնը միւս կողմն անցած էր. եւ այսպէս մերթ նպաստաւոր, մերթ աննպաստ լուրերէն յետոյ յուսահատական վիճակ մը ստացած էր, «համեմատութիւնը կորսնցուցինք» :

«Օ՛հ չարաբաստիկ վայրկեան, ձեռքերս սկսան դողդղալ, ծունկերս կ'թոտիլ, աչքերս մ'թագնիլ, ամբողջ արիւնս գլուխս խուժեց, կուզէի կատաղութենէս ջախջախել ջարդ ու փշուր ընել չարագոյթ թելեֆօնը. Շամբանեայի շիշերը որոնք դիշերուան հախար պատրաստուած էին՝ բարկութենէս քացախ կտրեցան, ջիղերս ամբողջ ոտքի ելան ցընցեցին էութիւնս, ա՛լ կորսնցուցած էի ինքզինքս, դահլիճին մէկ ծայրէն միւսը, աթոռներուն բախղիչով սեղանները թաւալելով կը պտըտէի խելագարի մը պէս, հիմա՛յ կըզգամ. ա՛լ իյնալու մօտ էի, երբ յեղակարծ ու ազմկալի ձանկոցը սթափեցուց զիս ու ելեքտրական անբացատրելի ձգողութեամբ մը թիւեֆօնին փարճայ :

Ու՛ֆ, ոսկի տառերո՛վ պիտի գրեմ սա քանի մը բառերը : «Պէյ, 300ը գտանք, քուէի բացարձակ առաւելութեամբ շահեցանք, ժողովուրդը ցնծութեան աղաղակներով կը գոռացնէ, կեցցէ Սահմանադրութիւններով կը դրողէ եկեղեցին, ժողովուրդը ամբողջ պատրաստուած է իր երախտագիտութեան հաւաստին տալու համար յոսս Ձեր Վսե-

մութեան, իրենց սրտագին շնորհաւորութիւնները մատուցանելու: Վայրկեան մը չանցաւ, արդէն մարդկային ալիք մըն էր որ կը տատանէր շուրջս, ալ խեղդուած էի բարեմազթուրթիւններու հեղեղին մէջ, ո՞ր մէկուն պատասխանեմ, մանաւանդ Վամարդ Յուսէփի պէս անձնուէրներուս, որոնց եւ ունիւր առաջին օրէն չի կրցայ չափի մը գնել. ալ խեղճերը չէին գիտեր ի՞նչպէս արտայայտեն իրենց տիրատիրական անզուսպ զգացումն ու հլու հպատակութիւնը: Երջանի՛կ՝ վայրկեաններ, հետզհետէ լեցուեցան սահմանադրականները յուզումնալից շեշտերով յայտնեցին իրենց շնորհաւորութիւնները: Բայց դուք ինչո՞ւ համար չէիք փութացած:»

— Թող հաճի Ձերդ Վսեմութիւն իր բարձր ներողամտութեամբ արդարացնել զիս, հաւատալով թէ՛ օրուան ծանր սպաւորութիւններուն տակ յուզուած ու յոգնած՝ անկարող գտնուած էի կատարելու անխուսափելի պարտականութիւն մը որ զիս զըրկեց Ձերդ Վսեմութեան անգնահատելի ու շարքութեանէն:

— Գիտեմ, այո՛ գիտեմ, բայց կը փափաքէի որ դուք ալ ներկայ գտնուէիք ու անհաղորդ չի մնայիք Շամբանեային առաջ բերած անպատմելի ոգեւորութեան:— Անհուն շնորհակալութիւն Վսեմ. պէյ, պզտիկ վայրկեան մը իսկ Ձեր ուշադրութեան աւարկան դառնալը՝ ծառանուդ համար մեծ ծագոյն երջանկութիւնն է:

— Չէ՛, ես միշտ այնպէս եմ եղած, սկզբունքի համար հոգի տուող մարդ եմ, կը սիրեմ այն մարդերը որոնք ինձի պէս են. իմ նշանաբանս է գոհն ըլլալ քան թէ գործիքը:

Ինչպէս յաճախ ըսած եմ, ճշմարիտ ազգասիրութիւնը ազգային օրինաց ու աւանդութեանց անլթար պահպանումին մէջ կը կայանայ, եւ ես կը խոստանամ ձեզ Սահմանադրութեան լիուլի գործադրութիւնը Աղեքսանդրիոյ՝ մէջ, վստահեցէք քանի որ ես եմ խոստացողը: Թող պատմութիւնը իր էջերուն մէջ արձանագրէ զիս, ապագան միայն կարող է լիապէս ցոյց տալ իմ տրամադրութիւններուս արդիւնքը: Ա՛լ այսուհետեւ ասպարէզ չիկայ Անթաղ Դիակներուն եւ իր արբանեակներուն համար, թող հիմայ երթան Խնամակալութիւն կազմին:

— . . . Ծառայ եմ՝

ՏԵՎԼՈՒՄՍԸ

ՔՐՈՆԻԿ

Ա Ա Գ Ա Յ Ե Ն

ԱՐԺ. Տ. ԵՁՆԻԿ ԻՍԶԱՆՍՅ ՊԱՆՈՒՆԻ
 յանկարծաման կ'ըլլայ խոր սուգի մէջ թաղելով իր բաղմանդամ ընտանիքին հետ Գահիրէարնակ բովանդակ Հայ Գաղթակաւ նութիւնը:

Տ. ԵՁՆԻԿ ծանօթ էր մնդի իր դարգացած մտքովը, աղնիւ սրտովը, բարոյական ձիրքերովն ու հայրենասիրական զգացումներովը. հետեւաբար, իր անսպասելի մահը զգալի պարսպ մը կը թողու մեր Հայ կղերականութեան մէջ, ուր, գծարդաբար, սակաւաթիւ են Պալուսիներ . . .

Մեր ամենախորին վշտակցութիւնները ողբացեալ Երիցուն ընտանիքին ու պարագաներուն:

— ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՄԱՌԻ Ե. ՊԵՆԼԵԱՆԻ
 այս շարթ տալիք Գրմրգր ձգտան թատերախաղին ներկայացումը կը յուսանք թէ պիտի քաջալերութիւն գտնէ մեր թատերասէր հասարակութեան կողմէն: Պէտք է քաջալերել արուեստագէտները:

Ու եթէ խորհինք որ այդ ներկայացումը կը տրուի ի նպատակ Սյրի Դերասանուհիի մը, ինչպէս է Տիկին Մառի Ե.Պէնլեանը, կրկնակի պարտականութիւն կը ծանրանայ մեր վրայ, մարդասիրական թէ գեղարուեստասիրական:

Գաջալերենք թատրոնը:

— ԱՂԵՒՍԱՆԴՐՈՅ ՎՍԵՄ. ԿԱՌԱՎԱՐԻԶԸ,
 բնականաբար նոր Խնամակալութեան կողմէն եղած դիմումի մը վրայ, իր քով կը կանչէ Մայիս 18ի Կիրակին Ս. Պողոս Պատրոսի բաղը հաւաքուած բողոքարկու ժողովուրդին մէջէն Կանձեր, նաեւ Խըմբազիբը Փիւնիկի, նոյն օրը հոն կարգացուած Յաւելուածին համար:

Հրաւիրուածներէն միայն Տիար Եգ. Թուրչուհեան կը ներկայանայ Գաղաքիս Վսեմ. Կառավարչին, Մայիս 25 ի Կիրակի օրը, առաւօտեան ժամը 10 ին:

Վսեմ, Կառավարիչը լսելէ յետոյ բացատրութիւնները, շատ իրաւացի կը գտնէ ժողովուրդին բողոքը, եւ կը յայտարարէ թէ՛ կառավարութիւնը հոս ամեն կերպ ազատութիւն շնորհած է բնակչութեան, առանց խտրութեան ցեղի ու կրօնի, խաղաղասիր-

րական միջոցներով լսեցնելու եր բողոքի ձայնը, ո՛ւր որ անկ է :

— Մօտերս ՄԵՄ ՄԻԹԻՆԿ մը կազմակերպելու համար գրաւոր դիմում եղաւ տեղական կառավարութեան :

— ՎՍԵՄ. ԱՅՐԱՀԱՄ ՊԷՅ ԲԱՐԹՈՂ, որուն առատածեռութիւնն առածի կարգ անցած է, վերջերս հաճած է նուիրել 250 ոսկի, տեղիս Ս. Պօղոս Պեարսս եկեղեցիին ու Վարժարանին նորոգութեան ու բարեկարգութեան ծախուց համար :

Մարդասէր Պէյը բարեհաճած է նոյնպէս տարեկան 60 ոսկիի գումար մը յատկացնել տեղիս Աղքատախնամին :

— ՎՍԵՄ. ՊՕՂՈՍ ԲԱՀՅ. ՆՈՒՊՍՐ եւս տարեկան 200 ոսկիի գումար մը յատկացուցած է իբրև նուէր Աղքատախնամին ու Ազգ. Երկսեռ Վարժարանին :

Ուրախութեամբ նշանակելով այս բերկըրառիթ լուրերը, կը փութանք հրապարակաւ յայտնել հանրային գոհունակութիւնը, մաղթելով որ մեր Հանր Աղաներն ալ չ'ուշանան հետեւելու այս գեղեցիկ օրինակներուն, որպէս զի գէթ այսպիսի բարեգործութիւններով մասամբ մ'արժանանան մեր համակրանքին ու յարգանքին :

ՊԱՐՍԿԱՀԱՅՔ

Սակայն եթէ քննութեանց խօրերը մտնենք, դարձեալ կարգ մը տեղացի անպարկետ կանանց վերայ պիտի ծանրանան այս կարգի տեղի ունեցած միջադէպերը :

Երբ մի անձնատուրութիւն քաջիհետոսի անուն է ստացել, բայց խելով ու զարգացումով ետ է մնացել. տեղական ժողովրդեան կուսակցապետները կամ որ հիշուի է՝ «մրտերը» սովորեցրնում են, նուէրներ են խոստանում, մանաւանդ թէ զանազան սուս ամբաստանութիւնները յերիւելով հակառակորդի վերայ, երբեմն էլ իրենց կանանց թելադրութեամբ՝ սաք արիւն եւ անգուսպ երիտասարդի ասելութիւնն են գրգռում, էլ ի՞նչ պատահասներ անես չի գործադրեր նա: Այսպիսի պա-

րագաների համար են ասեր Քրանսացիները «cherchez la femme», Այո՛, կիներ փնտնելու է այսպիսի դէպքերում. եւ պիտի տեսնես որ նորա դիտքի մասն է գործել տուր :

Սալմասի հայերն էլ այսպիսի զոհաբերութեանց փոխառէն պահպանել տուած են իրենց գոյութիւնը, էլ ինչի՞ աղմկում են լրագրեր: Իբրեւ ապացոյց, օրինակ եմ բերում Մահլամ գիւղի ներկայ ապահովեալ վիճակը, մի գիւղ է Մահլամը, որ ընկել է Սալմասի հայ գիւղերի եզերքը, որի նախիրն ու ոչխարներն ամէն տարի երգեր յափեսակում էին :

Յղան այնպիսի ժամանակներ էլ, որ պարսիկներ անգամ քիւրտերի շարձակումներից պաշտպանուելու համար հայ տղոց ամուսկան էին խոստանում եւ իրենց գիւղերը հրաւիրում, բայց հայ ներոսների այն տեղ մոտ գտնելէն ի վեր ոչ մի քիւրդ համարձակութիւն չէ ունեցել մաս պարզել դէպի իրենց գիւղը: Այնու ամենայնիւ գիւղի չարագործներից ոմանք ինք հերոսների գլխները կտրել տալու պատճառը դարձան ու փոխառէն ընդունեցին, որոց թուում միայն ափսոսալի էր նոյն գիւղի ազնուականներից՝ Մէլիք Զաքէ անուն հիրաւէր ու բարի անձնատուրութիւնը, եւ որը իւր պարզութեամբ մասնիչի դերն էր կատարել, լսելով չարամիտ համագիւղացիներին ու ռամիկ տէրերին: Տեղն է այս քահանային հրաւագործութիւններից մինը պատմել մեր ընթերցողներին: Մասնից հինգ տարի առաջ մի կատարած էր ուզեցել էին սպաննել գնդակահար անելով, տէրերը խնդրում է որ էր յանձնեն իրեն. ինքը կ'անողջացունէ ու երբեմն վրան հեծնելով ներս-դուրս կ'անէ, ոմանք ասում էին թէ «աղօթելով հրաւէր է ուզեցել գործել», բայց խկութիւնն այն է եղել, որ էր բերան ուտելի կամ դեղ լեցուցած ժամանակ,

կասադած էր յափեսակում է նորս
ձեռաց մասները: Հրաւարձութիւն
չէ: (°)

Ողջ Ասրպասականի ժողովրդեան
մեծ մասը՝ քահանաներին յարգում է
ինչպէս սուրբերի. եթէ նոքա մի քիչ
զարգացած մարդիկներ լինէին, ինչ
հրաւիրեալս ասես չէին գործել ժողովրդ-
եան յառաջդիմութեան համար: Գեոու-
ցան քահանաներ էլ որ ուսումնարան
բաց անելու գործում զաղտնի արգելի-
նէր յարուցին, համոզելով ժողովրդ-
եան թէ «վարժապետները ձեր տղոց
պահս ունել են սովորեցնում» են:

Ասրպասականի ներկայ առաջնոր-
դը՝ Գե. Տէր Եղիշէ Ծ. Վարդապետ
Մուրադեանցի աջալուրջ գործունէութի-
ւնից կախումն ունի իւր գաւառում
զարգացեալ քահանաներ պատրաստելը
կամ յարմարաւորներին քահանայանալ
համոզելը, որի վերայ տեսայ եւ գե-
ղեցիկ յասկութիւնները, ինչպէս առա-
ջին փորձով ցոյց տուց իւր ընդունա-
կութիւնը: Գե. Մուրադեանի առաջին
փափաքն էր մի արագասիայ մամուլ
տանիլ իւր հետ Թարեզում, եւ յաջո-
ղեցաւ իւր ընտրութիւնից անմիջապէս
յետոյ: Այս վառվռումն ու երիտասարդ
եկեղեցականին պատահեցայ առաջին
անգամ Մեծ Ղարափրիսի շոքեկառփի
կայարանում, երբ Վեհափառ Հայրա-
պետի շքանշանի հետ Սանահին վանէն
Էջմիածինն էին վերադառնում, որին
խոսիւ հրամայել էր Նորին Ս. Օծու-
թիւնը իւր մօտ գալ եւ ընդունիլ Աս-
րպասականի կարեւոր թեմի առաջնոր-
դութիւնը՝ Հայրսուրբի հետ երեք երկար
գիշերներ ու ցորեկներ ընդարձակ տե-
սութիւններ ունեցանք, եւ որ մերք Այ-
վասեան Սրբազանից ու երբեմն ինձա-
նից իւր Նար թեմի վրայօք հարցեր էր
անում յօգուտ բազմակարօս ժողովրդ-
եան: Այս տեղ պէտք է խոստովանել,

որ Այվասեան Սրբազանն էլ անկողմ-
նակալ ոգով բացատրում էր ժողո-
վրդի ամենակարեւոր խնդիրներն ու
պիտոյնները: Տայր երկինք, որ Մու-
րադեան Հայր սուրբը կարեւոր պատ-
կել Ասրպասականի Հայ ժողովրդեան
բաղձանքը, եւ արժանաւոր յաջորդն
լինէր Միթրարեան եւ Սարանեան Սր-
բազաններից:

Սալմասի Հայոց տուները մեծաւ
մասամբ երկ յարկեցի են, ընդարձակ
բակերով ու սրահներով, բնութիւնը
խնայած չէ այս գաւառին թէ շինե-
լափայտ եւ թէ ամուր հող ու քար:
Վերջերս աստեղն սկսել էին թրծում
աղիւսներով շինել իրենց բնակարան-
ները, որ քարից անելի հաստատուն են
համարվում ու գեղեցկասէս, նարպիկ
որմնադիրները գունաւորելով յարմարե-
ցրնում են պատերի շարքերը: Չուար-
նալի է նաեւ որմնադիրների եղանա-
կաւոր (երգելու նման) նիւթեր պահան-
ջելու ձայնը լսել: Բնակարան շինել
տուողների նաւակիցն են կախուիլ ու-
զած ձեւերով շինել տալու իրենց շին-
ութիւնները: Այս գաւառի հարսարա-
պետն էլ, երկրաչափն էլ որմնապիրն է,
բաւակաւնէ որ բերանացի պատմես նմա
շինածը բնակարանի ձեւն, գրեթէ ան-
մէն տուներն ունին իրենց ձեւնային
եւ ամառնային բօնրատուները, ամառ-
նային բօնրավայրի ճիւղաւայրն պատր-
բաց են բողնում, որ հացբոյսները չը
նեղուին ու մշական զով լինի: Սեն-
եակները, մանաւանդ հիւրանոցի ծա-
ռայող մասի յասակները պարսկաս-
տանի ընտիր գորգերով փռուած են,
ոմանք Եւրոպական աթոռներ էլ ունին
հիւրանոցներում եւ ամեն տեսակ կահ
կարասիներ:

(Շարունակելի) Ն—ԵՐ